



ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐԹԱԶԱՆԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԷԺԻԻ 41

ԱՊՐԻԼ 21/4 ՄԱՅԻՍ 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ


ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԷ



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՃԱԲԱԹԱԹԵՐԹ



Երկրոց տարի ։ Ապրիլ 21/4 Մայիս ։ Թիւ 41

Ասիլյէ վէ Մէզահիպ նեզարէքինսէն մէվրուս
7 Մարտ 328 քարիսլու քեզէրէնին նեվապր սր:

Հուզուրը տիի նեհապր Սասարէք ուզմայա

Մարուզը տաիլէրի տիր .

Թարաֆէյնտէն թագտիմ գըլընան իսթիտա վէ չիքեաեաթըն հա-
զարը տըզգաթա ալընտըլընա վէ տաիլէրի իլէ ֆըրզալը մուխալիֆէ պէյ-
նինտէ հուսուլէ կէլմիլ օլան իսթիլաֆա տաիր մէճլիսի վիւքէլաճա իթ-
թիխազ օլտընան մուզարրէրաթը մուչիր 7 Մարտ 328 թարիսիլյէ մու-
վէրրախ Ատիլյէ վէ Մէզահիպ նեզարէթինին թէզքէրէսի վասըլը տէսթի
տաիլէրի օլտու :

Էվվէլա . Տաիլէրի էճնէպի նուֆուզը ալթընտա միլլի Սինոզ ինի-
գատ իթտիրտիկիմտէն պահալա իթհամ իտիլմիչիմ . պու մէսէլէ սըրֆ մէզ-
նէպի օլտուլընտան հիւքիւմէթին սէլահիյէթի խարիճինտէ տիր : Սինոզըն
Բօմատա իճթիմաը էմաալսիզ օլմատըլը կիպի Ատիլյէ նեզարէթինին

Թէզքէրէսինսէ զիքր օլունսըզը վէճնլէ մէզքիւր Սինոգըն ինիգատը հագ-
գընտա թագրիւրի տախյանիմլէ զաթը Էֆիւէմիլէրինէ ինպարը քէյֆիյէթ
իտիլմիշ օլմազլէ, պու պապտէ հիւքիւմէթի սէնիյէ ճանիպինսւն պիւ
կէօնա իթիրազ վուգու պուլմամըշ իտի, մամաֆիյի Հաշմէթլու Փափա
հազրէթլէրի 30 Ալոսթոս 1911 թարիխլու էմրնամէի ըէսմիյէսիլէ Րօմա-
տա մէզքիւր Սինոգըն ինիգատընը էմր իթմիշլէրսի:

Ալէյիմտէ վազը օլան իշպու իթհամաթ ու մումի գաթօլիքլիկին
ըէիսի էքրէմինէ տօլրուտան տօլրույա իսապէթ իտէր. պուլտան մատա
պիզ գաթօլիքլէր Բարա հազրէթլէրինին հիւքմէթի բուհանիյէսիսի էնէսլի
կիպի թուլմատըզմըզ մալիւմի սատարէթփէրնահիլէրի տիւ. նասըլ քի
պիւթիւն տուվէլի մուազզամա ինտինտէ տախի պու սիասի վէ մէզնէպի
հազըգաթ մալիւմ վէ մէզգում տըր:

Սանիսն. Պազը թէհտիտամիզ մէքիւպլարըմլա փիսգօփօսլարին
Րօմանա ֆիրարլարընա սէպէպիյէթ վէրմիշ օլտուղըմլաւան տօլանը իթ-
համ իտիլիյօրմ, պու իսէ քիւլլիէն մուգայիւրի հազլգաթ ալր. փիսգօ-
փօսլարըն էքսէրիսի միլլի Սինոգտա հազըր պուլունմազ իշիւն Փափա
հազրէթլէրինին էմրի վէճնլէ տավէթի տախյանէմ իւզէրինէ վէ իթալիա
մուհարէպէսինտէն էվվէլ Րօմայա կիթմիշլէրսի. կէրչէ իքի փիսգօփօսըն
Րօմայա ազիմէթի մուխասէմաթտան սօնրա վուգուա կէլմիշ իսէ տէ
Փափալըզ մագամընըն իսթիզլալը արզիյէ վէ պիթարաֆլարընը քեսֆիլ
օլան գալանիյնտէն իսթիֆատէ իթմիշլէր տիւ. գալանիյնի մէզքիւրէ
իսէ հիւքիւմէթի սէնիյէ վէ իթալիա տախիլ օլտուղը հալսէ պիւճիւմլէ
տուվէլի մուազզամա թարաֆընտան մագպուլ վէ մէրի տիւ. պուլտան
մատա փիսգօփօսլարըն Րօմայա ազիմէթինէ մումանաթա գալգըշան
պիւ ֆըրգայը մուխալիֆինին թէհտիտօթ վէ թէհտիտաթ մուվաճէնէ-
սինտէ մէզնէպճէ պիւր վազիֆէ իֆասը իշիւն Հաշմէթլու Փափա հազրէթ-
լէրի թարաֆընտան վաթիգանա չըզրըրլան փիսգօփօսլարըն: իշպու էմրի
թէրճիհաէ թէրէտտիւտէ մահալ եօզ իտի, պինոպէրին մէսէլէ ֆիրար
մէսէլէսի օլմահուպ գաթօլիքլիկին հաքիմի էքրէմինին էմրինէ իճապէթլէ
պիւր վազիֆէի մուգատտէմէ իֆասընտան իպարէթ պուլունսըզը պէտի-
հի տիւ:

Սալիսն. Տաիլէրի ումուրը ճիսմանիյէյէ տախի մէզքիւր Սինոգտա
պազը մուգսորէրաթ իթթիլազ էլլէմիշ օլտուղըմտան տօլանը իթհամ ի-
տիլմիշիւմ, պու տախի քիւլլիէն մուխալիֆի հազըգաթ տըր. զիւր Րօ-
մատա պուլունսըզըմ էսնտաէ իսքիփայը Սաատրէթփէրնահիլէրինէ թագ-
տիւմ էլլէմիշ օլտուղըմ մարիւզիքը թալտիւրաէ մէսէլէնին նէտէն իպա-
րէթ օլտըղընը արզ ու իշար իլլէմիշ իքէն պու տէֆա ատիյէ նազսորընը
մէզքիւր թէզքէրէսինտէ պու Սինոգըն ումուրը ճիսմանիյէ իլէ իլթիզալ
իթտիկի պէյան օլունմասը խիւաֆը հագըգաթ տըր, զիւր մէզքիւր Սի-

նողոստա սրբֆ ումուրը բունանիյետէն պահս էտիւմիշտիր: Մէվատար մէզ-
քիւրէնին թէֆէրուաթ վէ թաֆսիլաթընա կէլինճէ ճէօմաթա ախտ էմ-
վալ հազգընտա Սինոգ թարաֆընտան պիր կէօնա թէտպիր իթթիխազ օ-
լունմամըշ տըր . էմվալը մէզքիւրէ ճէմտաթ թարաֆընտան թաեին օլու-
նան հէյէթլէր մարիֆէթիլէ թէսիսլէրի կիւնիւնտէն պէտէն պու սնէ գա-
տար իտարէ օլունա կէլմիշ վէ կէլմէքտէ տիր . հէյիէթի բունանիյէնին էմ-
վալինին իտարէսինէ՝ փաթրիգ վէ փիսգօրոսլարըն ինթիխապընա կէլինճէ
պունլար ումուրը ճիւմանիյետէն մատուտ օլմալըպ՝ ֆազաթ մահզա մա-
հիյէթլէրի իթիպարըլլա գաթօլիք քիլիսէսինին գալանիյն վէ նիզամաթր
բունանիյէսինէ ախտ մէվատտան տըր :

Բապիհէն . Միւնհալ օլան տօքուզ փիսգօրօս քիւրսիլէրի իչիւն կէ-
րէք Սինոգըն վէ կերէք ճէմաթըն ինթիխապաթընա միւրաճաթ էթ-
մէքսիլըն պիզգաթ տօլրուտան տօլրու քէնտի պաշրմա փիսգօրոսլարը
ինթիխապ էթթիյիտէն տօլալը իթհամ էտիւմիշիմ . մալիւմի տէվլէթլէրի
օլտուլը իւզրէ պազը վէխիմ սըրսլարտա սէլամէթի էհալի իչիւն լիւ-
զում կէօրիւլէն թէտապիրի իսթիսնաիյէ իթթիխազընտա հէր հիւքիւմէթ-
ճէ ճէվազ վար տըր . ֆիրպայր մուխալիֆէ թարաֆընտան խարապիյէթ
տէրէճէսինէ իտալ էտիւմիշ օլան էրմէնի Գաթօլիք քիլիսէսինին պուլուն-
տըղը հալը զարուրէթ իշթիմալըն մուվաճէհէսինտէ Բարս հազրէթլէրի
մալիք օլտըլը հազգը հիւքմրանիսի միւճէպինճէ պիր տէֆա իչիւն փիս-
գօրոսլար ինթիխապը իմթիյազընըն ատէթլինի թատիլ էտուզ տօլրուտան
տօլրուլա թէնտուլէրի միւմաիլէյն փիսգօրօսլարը թաեին էթմիշ տիր .
իմսի պու թաեինի իթհամ էթմէքլէ շախսըմա թարուզ օլմալուզ իլլա
Հաշմէթլու Փափա հազրէթլէրինին շախսընը իթհամ էթմէք տէմէք տիր :

Խամիսէն . Կէօրիւնիւրտէ քաթրիգխանէնին մուխթէլիֆ վազիֆէսի
տախիլինտէ պուլունան էմվալի տաիլէրի իտարէ էթմէք սատատընտա
պուլունմազըլըմ իլէ իթհամ էտիլլէյօրլմ . իտարէի տաիյանէմ իսէ բու-
հանի քիւրսիմէ ախտ քիլիսէ էմվալինէ միւնհալըր վէ մահսուր գալմըշ
տըր , պունտա իսէ պիւա իսթիսնա սէլէֆլէրիմին քիսաֆէսինին պու կիւ-
նէ գատար թագիպ էլլէմիշ օլտուզլարը ուսուլ վէ ատաթ վէճհլէ հարէ-
քէթ էթմիշիմ . էմլաքը միլլիյէ իտարէսի իսէ ճիւմանի հէյիէթլէր մարի-
ֆէթիլլէ իտարէ օլունմըշ տըր :

Սաքիսէն . Ուսուլ վէ ատաթ վէճհլէ ճէմտաթ թարաֆընտան ինթի-
խապ օլունան հէյէթի ումուլիյէյի թանրմատըլըմտան տօլալը իթհամ օ-
լունուլօրլմ . հալ պու քի իսթիսնա վէ իտտաա էլլէտիքլէրի նիզամնա-
մէլէր նէ հիւքիւմէթր սէնիյէ թարաֆընտան վէ նէ տէ քիւրսի շէրիֆ
ճանիպինտէն թանըլմըշ տըր , պինապէրին պու նիզամնամէլէրին հիւք-
միւ Եօզ տըր , մամաֆիհ գաթօլիք օլմազըլըմըզ հասէպիլլէ սրբֆ յարլա-
մէնթարիզմ ուսուլընը հաիլ պու կիպի պիր հէյէթի ումուլիյէնին վիճու-
տինի քիլիսէմիզտէ գապուլ իտէմէզ . վէ գաթօլիք քիլիսաաընըն թէէսի-

սաթընա մուխալիֆ վէ մուղայիր օլան պէօլէ պիր հէյէթին Գապուլի իճ-
պար էտիլէմէզ :

Ապաիհն . Բաթրիգ վէ Բիսգոբուս վէ մէրխապալարն ինթիխապըն-
տա ճէմաաթըն լէյլէրի զայրի մէճպուլի օլտըղը իտտիասընտա պուլընտը-
ղըմտան տօլայը տաիլէրի իթհամ էտիլիօր . ումումի գաթօլլ քլիքտէ չարգ
գաթօլլք քիլիսէլէրի տախի տախիլ օլտուգլարը հալտէ Բ . Թրիգ վէ փիս-
գօբոսլարըն ինթիխապը հազգընտա Փափա հազրէթլէրի թարաֆընտան
իհսան պուլուլըլան իմթիյազաթ ֆըրգաի մուխալիֆէ թարաֆընտան իլմի
հուգուգա մուղայիր օլարագ հուգուգը միլլիյէյէ իրճա էթմէլէրի հաչ-
մէթլու Բարա հազրէթլէրինին հաքիմիյէթի լուհանիյէսինէ թարուգ էթ-
մէք տիր . մէվճուտ իմթիյազաթը լազվ էթմիչ օլտուղըմ պի էսաս տրր .
մէրխապալար մէսէլէսինէ կէլինճէ պու մէսէլէ պաչլըճա հիւքիւմէթէ ախտ
պիր մէսէլէ օլտըղընտան չիմտիյէ տէկին պուլըն խիլաֆընտա պիր կէօնա
հարէքէթ օլուհմամըչ տրր :

Մէրհում բաթրիգ Ագարեան էֆէնտի վէմանընտա միւնազըս մու-
գարլէրաթը իթիլաֆիյէյէ տախի միւմաիլէյի բաթրիքին Ատլիյէ նէզա-
րէթինէ խօտ պէ խօտ թագաիմ էյլէտիյի 3 նիսան 304 թարիխի թագրի-
րէ կէլինճէ . իչպու մուհարրէրաթը իթիլաֆիյէնին թասհի'ի իչլան իքի
սէնէ սօնրա Եանի 306 սէնէսինտէ Սինոդ մէճլիսի ինիգատ էտէրէք .
պուլընտա տիանէթճէ մուղայիր պուլընտալարը Գիւրսիի չէրիֆին էմրի
իւզէրինէ պատէթթասհի'ի բաթրիգի միւշարիլէյիին 23 թրչր . էվվէլ 306
թարիխի իքինճի պիր թագրիլի իլէ Ատլիյէ նէզարէթինէ արդ օլուհմըչ
վէ իչպու իքինճի թագրիլին սուրէթի 7 շուպաթ 327 թարիլի թագրի-
րի տաիյանէմ իլէ Ատլիյէ վէ Մէզահիպ նէզարէթինէ թագաիմ էտիլմիչ
օլտուղը հալտէ նազարը Էհէմիյէթէ ալընմատըղը շայանը թէէսսիւֆ տիր :

Պինաէն ալէյի էվվէլճէ վէ միւքէրրէրէն միւթէգատտիմ մարուգա-
թը տաիյանէմ սէմ ու իթիպարա ալընմայարագ պիլագիս գաթօլլք քի-
լիսէսինին գափանիյի լուհանիյէ վէ ինթիզամընա քիւլլիյէն մուղայիր
օլան ֆըրգայը մուխալիֆէ միւտտէիաթընըն հիւքիւմէթճէ հազգը ըիւճ-
հանիյէթէ մազհար օլմասը շէրէֆսատըր օլան խաթթը հիւմայուլն ման-
թուգը միւնիֆիինճէ լուէսսաի լուհանիյէ հուգուգընըն մոհաֆուգասը
միւշքիլաթը մուճիպ օլաճաղը ճիհէթլէ հազգը տաիյանէմտէ մէճլիսի վիւ-
քէլաճա իթթիխազ գըլընտան մուգարրէրաթ ալէյիինտէ Սինոդ հէյէթթիլէ
պէրապէր շէտիտէն բրօթէսթօ իտէր վէ ճէմաաթըն լէիսի լուհանիսի պու-
լուհտըղըմ հասէպիլիյէ պու պապտէ հաչմէթլու Բարա հազրէթլէրինին էմ-
րինէ միւնպատ օլտըղըմ կիպի զաթը հազրէթի փատիշահինին թէպապը
սատրգասընտան պուլընտըղըմը քէմալը իթթիխարլէ արդ էտէրէք իչպու
բրօթէսթօնամէնին թագաիմինէ իճթիսար էյլէրիմ :

10 Մարտ 1828

Իմզա

Էրսիկի Գաթոյի՛ն ճեմաաթը կաթողիկոսը Թեքդակն

ԱՄԵՐԻԿԱ

Ա. Ամերիկայի նոր Կարդինալներ. — Բ. Կարդինալներ
ծաւալումը Միացեալ Նահանգներու մէջ :

Ա.

Ամերիկայի Կաթոլիկէ ժողովուրդեան մէջ նոր երկու Կարդինալներ
ունենալու. Ֆարլէյի և Օ'Քոննէլի նկատմամբ ամենամեծ խանդավա-
րութիւն մը դրդեց երկիրը չայլել ի ծայր. որուն մասնակից եղաւ նաեւ
կառավարութիւնը՝ թէեւ բողոքական :

Նիւ-Եորքի Արքեպիսկոպոս Կարդ. Ֆարլէյ դեռ հոնկից չմեկնած,
նմանը չտեսնուած ցնծութիւններ կատարած էին հարիւր հազարաւոր ժո-
ղովուրդներ. անուր հանդիսութիւններով նաւ առաջնորդեր էին զինքը,
կառավարական զօրաց վաշտերու ընկերակցութեամբ. և զինք տանող
չոգենաւ. և վրայ Միացեալ Նահանգաց աստեղագար դրօշակին քով
պարգուած էր նաեւ Քահանայապետական ճերմակ-դեղին դրօշակը, որ
Ովկէանոսի վրայ ծածանեցաւ ամբողջ ճամբորդութեան տեւողութեամբ,
մինչեւ ցՀո վր : Հազիւ Կարդինալական զլխարկը դրուած էր ի Հռովմ
երկու մեծ Ամերիկացի Արքեպիսկոպոս քաղաքացիներուն գլուխը, և ահա
Մ. Թաֆթ, Միացեալ Նահանգաց բողոքական Նախագահը կը փութար
երկուքին ալ գեղեցիկ հեռագիրներ ուղղել շնորհաւորութեան և բարե-
մաղթութեան. և կը յաւելուր թէ Միացեալ Նահանգներու Կառավարու-
թիւնը կը փառաբանէ նախաձեռնութիւն ունենալ համակրանաց և սիրոյ ցոյց
մ'ընելու՝ երբ Նիւ-Եորքի ու Պոթերնի վիճակաւորք վերադառնան իրենց
տեղը : . . . Ինչ աղիւս օրինակ Կաթոլիկէ ժողովուրդոց, իրենց հոգեւոր
պետերը ըստ արժանւոյն մեծարելու : Նիւ-Եորքի Կաթոլիկէ ժողովուրդ-
ը իր Կարդինալ—Արքեպիսկոպոսին մասնաւորապէս հեռագրած էր որ
ամիսէ մը առաջ չվերադառնայ իւր Աթոռը, որպէս զի Փամանակ ունե-
նան ամէն մանրամասնութեամբ կատարելագործելու այն հսկայական
ցոյցը զոր պատրաստելու վրայ էին :

Եւ յիշուի հսկայական եղաւ այն ցոյցը, ու երեւոյթն առաւ կա-
տարելապէս յաղթական մուտքի մը :

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգաց մէջ Կաթոլիկէ կրօն-
քին երկտասարդ կենսունակութեան ու գործունէութեան, և իւր հրա-
շարի տարածման ու խաղաղաւէտ ու երջանկարար աշխարհակալութեան
մէջ ունեցած աստուածազգեցիկ ուժին յայտնի մէկ նշանն էր : Այս տահա-
գին շարժումը և այս անօրինակ հանդիսութիւնը ցոյց կուտան թէ քանի
մը դարէ ի վեր անդրծովեան ահագին հողամասին տիրապետող ժողովուր-
դը, ամէն ժամանակէ աւելի հզօրեղապէս կը զգայ Ովկիանոսներու վրա-
յէն իրր ամենաթանկագին գանձ իրեն հետ բերած հաւատքի հոգին, և

զայն անարատ կը պահէ հակառակ այն քայքայումի: և ապականութեան որ որ կը սպառնայ ծեր Եւրոպային, մաշեցնելով բարոյականութեան և ճշմարիտ քաղաքակրթութեան, որով և ճշմարիտ հայրենասիրութեան հիմերը: Այս եռանդնալից արտայայտութիւնները ուրիշ ոչ նուազ վսեմ նպատակ մըն ալ երեւան կը բերէին. փառաբանել նաեւ Սրբազան Քահանայապետը, մէն մի քաղաքացիին երախտագիտական տրիտուրը ձօնելու անհաւատը, բողոքականէն մինչեւ հրեայն, ան անբաւ ծառայութեանց համար զորս Կաթողիկէութիւնն մասուեցած էր այն հասարակապետութեան, բարոյական կարգի և քաղաքակրթութեան դատին:

Պէտքէն շոգեման էր որ կը բերէր զԿարգինալ Ֆարլէյ Անդլանտեան Ովկիանոսի վրայէն և հասած էր Նիւ-Եորքի ծովածոցը Յունուար 17ին: Անհնարին է նկարագրել այն ահագին քաղաքին խանդավառութիւնը և հանդէսները: Շատ հեռուն շոգեմանուն վրայ վազեցին յոգնախուռն շոգեմակոյկներ, իրենց մէջ տանելով այլ և ներկայացուցիչ խումբեր, որոնց առաջին հասնողն եղած էր խմբագիրներունը, աւելի քան քառասուն անհատներէ կազմուած, որոնք սիրալիր կերպով ընդունուեցան Միրանաւորէն և լսեցին Սրբազան Քահանայապետին հայրական սէրն և մեծամեծ յոյսերն զորս դրած էր Ամերիկայի ապագային վրայն:

Հազիւ Կարգինալը ոտքը դրած էր ցա'աքի վրայ, դիմաւորելու եկած կարծես անձայրածիր բանակէ մը բազմաթիւնով ծափահարութիւն մըն է փրթաւ և թնդացուց ծովեզերքն ու անհուն դարպասը. մէկ միլիոն ժողովուրդ էր որ խոնուած էր ծովափունքէ մինչեւ Մայր Եկեղեցի, ամէն ազգերէ և կրօնքներէ: Ամերիկայի գրեւէն ի վեր, կ'ըսեն տեղական թերթերը, չեղաւ մահկանացու մը, ոչ քաղաքական, ոչ եկեղեցական, ոչ գրական կամ արուեստաւոր աշխարհէ, որ արժանացած ըլլայ այսքան խանդավառ ընդունելութեան մը: Մեծ պոլոտային անցքը, ուր կը սուրային քանի մը հարիւր ինքնաշարժ կառքեր, հազիւ թէ կրնայ նմանցուիլ հինն Հռովմայ յաղթական Կայսրներու մուտքին:

Ծովափունքի վրայ վեց հարիւր բարձրատիւնան անձինք, իրրեւ ներկայացուցիչներ բարձր դասակարգերու, ծնրադիր յարգութեամբ համբուրեցին Վսեմ. Միրանաւորին Ս. Աջը: Քառաձի և Քահանայապետական զինանշաններով զարդարուած չքակառքի մը մէջ ուղեւորեցաւ նա դէպի Մայր Եկեղեցին: Փողոցներն ու աները ազգային ու քահանայապետական դրօշներով պնդարդուած էին: Կառավարութիւնը կը մրցէր Կաթողիկէ ժողովրդեան հետ մեծարելու և փառաւորելու Հռովմէական ծիրանիով պատուեալ Արքեպիսկոպոսը, որ նոր փառք մը կը յաւելուր Նոր Աշխարհի մայրաքաղաքին: Երեկոյն շքեղ լուսավառութիւն մը տեղի ունեցաւ. Աթոռանիստ եկեղեցւոյ զանգակատան բուրգը բոցավառած էր. յիսուն հազար ելեքտրական լամպարներ կ'աստղաղարդէին զայն:

եղած ընդունելութիւնները, սարքուած հանդէսները, մեծամեծ գրագէտներէ, պատգամաւորներէ, ծերակուտականներէ արտասանուած հիանալի ճառերը բացասելը կարելիութեան և թերթիս սահմանէն դուրս է: Ասոնք կը գովաբանէին նոր Կարգինային անգուպական բարեմասնութիւնները և Պիոս Ժ. Քահանայապետին հեռատես իմաստութիւնը: Քաղցր էր լսել այս ձայններ որ կը հնչէին հեռաւոր աշխարհէ, անկեղծօրէն: Իմէջ՝ այլոց ծերակուտական Պէօրք կ'ըսէր՝ որ, թէեւ կառավարութիւններուն չարակամութենէն ամբողջ ժողովուրդներ բաժնուած են և կեղեցիկէն և աղանդաւոր կուսակցութեան ամպարշտութիւնէն յարուցուած են ամէնուրեք խոչնդոտներ և դժուարութիւններ Պիոսի Ժ.ի առաքելական պաշտաման դէմ, սակայն Նորին Սրբութիւնը գիտցաւ խոհական տրամադրութիւններով պարտաճանաչ Դիտապետներ և կղերներ և Կարգինալներ բազմացնել, քանզի գիտէ թէ հաւատարիմ ժողովրդեան մը վրայ կ'ըլլի, որ փաղանգօրէն խտացած, կը մեծարէ իր հրամաններն ու կամքը, մինչեւ աշխարհիս ծայրերը, ի հեճուկս իւր աշխարհային իշխանութեան բռնաբարուած ըլլալուն: Մեր հաւատքը փրկեց Նա բարոյական աւազակներու ձեռքէն, որոնք կաթողիկէ անունին տակ ծպտեալ, կը դաւէին Ս. Եկեղեցւոյ և անոր պաւակները կ'ուժացնէին իրմէն նիւթապաշտ մոլորութիւններու գալտնի թունով: Յաւանական օրհնութեամբ պիտի ըլլայ, կ'ըսէր պերճիմաստ ճարտարախօսը, Պիոսի Ժ.ի յիշատակը՝ անոր համար որ ամենօրեայ Հաղորդութեան Ս. Սեղանը բացաւ հաւատացելոց առջեւ, այն Աստուածային խորհրդոյն սեղանը, որմէ կը բղխի մշտնջենական կեանք, ու մեր եկեղեցւոյն գեղեցկութիւնը, զի այն պատճառաւ կան Մայր եկեղեցիներ, աղօթատեղիներ, խորաններ և տապանակներ, որովհետեւ Սիրոյ Աստուծոյ կոչունքին կը ծառայեն:

Շատ երկայն պիտի լլլար այս ցոյցերու շարքը հոս նկարագրել, որ և իցէ ձեռի տակ կատարուած ըլլան:

Բայց կարելի չէ զանց ընել դէպք մը որ հազուադէպ ըլլալէն աւելի միակ կրնայ ըսուիլ, այս է՝ այն սեղանը զոր ի Ուոլտօրֆ Աստօրիա Կարգինալ Ֆարլէյին տունին հարիւր քսան և հինգ չկաթողիկեայ, առաջնակարգ սեղանաւորներ, վաճառականներ, օրէնագէտներ, և այլեւայլ եկեղեցիներու ներկայացուցիչներ: Այս առթի մէջ խօսեցան՝ մայրաքաղաքին Կոստակալն Տիքս, Քաղաքապետն Կէյնըր, մինչ մեծ Բաբոնապետն՝ Տգթ. Կիմմրման Նորին վսեմութեան՝ Կարգինալ Ֆարլէյի կը մատուցանէր ուղերձ մը շնորհաւորութեան և մեծարանաց բովանդակ Նիւ Եորքի ժողովրդեան կողմանէ: Նոյն ինքն հանրապետութեան նախագահն Թաֆթ, արգելքի մը պատճառաւ կրցած չըլլալով հոն ներկայ գտնուիլ, զոր շատ փափաքած էր, Ուայթ Հատուղէն գրեց հետեւեալ գեղեցիկ նամակը առ կարգադրիչն և գահերէցն հանդիսին:

Ուաշինկըրն, 26 Յունիս 1942

Սիրելի Պարոն Մեք. Մեծ ցաւ կը զգամ յիարենալու ներկայ գտնուիլ անաղանդաւորական այն սեղանին, որ կը տուի ի նշան շնորհաւորութեան առ Կարդ. Ֆարէյ՝ առթիւ անոր անբարձման ի պատիւ Կարդինալի Հովմեական Կաթողիկէ եկեղեցոյ: Այս սեղանին նկարագիր արտայայտիչն է փոփոխակի հանդուրժողական զգացումն եւ եղբայրակցական սէրը: Ոչ Կաթողիկեայք շատ մեծ իրաւունք ունին արժանապէս յայտնելու իրենց բարձր համարումն զոր ունին Կաթողիկէ եկեղեցոյ հանդէպ, այն բարեւար ազդեցութեան համար զոր նա ի գործ կը դնէ մեր հասարակութեան մեջ՝ հզօրապէս դիմադրելով անխիստական փարդապետութիւններու, մեծ կարողութեամբ պաշտպանելով օրէնքները, կարգն ու դրօշմն ու ճանցցում իշխանութիւնը: Եւ եկեղեցոյ Գլխուն՝ երեք նոր կարդինալներու անուանումով ամերիկացի անունն պատշաճ ըլլալն քնակաւարար հպարտութեան աղբիւր մըն է մեզ՝ ամեն ամերիկացունց համար, որոնք ամենագոհ ենք տեսնելով որ մեր կորովաւիս եւ արժանաւոր փաղաքացիք այսպիսի պատիւ մը կը բարձրանան:

Կը խնդրեմ որ հաճիք իմ սիրոյ հաւաստիքս ու շնորհաւորութիւններս մասնացանեց Վսեմ Կարդ. Ֆարէյի. որ քաղմաթիւ տարիներէ ի վեր զիս կը պատուէ իր քաղկաւաւորութեամբ: Եւ եմ

Ձերդ անձնականուհ

ՌԻԻԵԸՄ Զ. ԹԱՅԹ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ Ի ՎԻԵՆՆԱ

Արդէն ծանօթ է մեր ընթերցողաց անցեալ տարի Մատրիաի մէջ տեղի ունեցած փառաւոր Համաժողովն, որուն այնքան յիշատակելի կերպով մասնակցեցաւ Ամենապ. և Գերեք. Հոգեւոր Տէրը¹: Արդ այս տարի որոշուած է որ այդ Համաժողովը գումարուի ի Վիեննա, մայրաքաղաք Աւստրիոյ: Ութամամեհի Կայսր-Թագաւորն Փրանկիսկոս-Յովսէփ՝ ժամանակին Կարգադիր Մամաժողովին լուր ղրկած էր Վիեննայի Արքեպիսկոպոս Նակըլի միջոցաւ թէ ինք կը ստանձնէր միջազգային Կաթողիկէ այս մեծ ցոյցին պաշտպանութիւնը: Արժանաւոր գործ մըն է այս՝ այնքան բարեպաշտ Կայսերաց Թոռան և յաջորդին և այնպէս հիմնովին Կաթողիկէ ժողովրդեան համար: Կայսեր այս գործը միանգամայն խոնարհ մեծարանք մըն է աստուածային Խորհրդոյ Ս. Հաղորդութեան: Իւր ամենազոյս պատանեկան հասակէն սկսած էր նա Ս. Խորհրդոյն հրապարակական ցոյցերուն մասնակցիլ, մանաւանդ բնաւ չէր պակսէր Ս. Հաղորդութեան Տօնի մեծ Թափօրին, ուր որ ալ գտնուէր: Կայսե-

¹ Տես. Արձագանք Ա. տարի. Թիւք՝ 4, 5, 6, 7, 8 և 11:

րական այս պաշտպանութիւնը գրաւական մըն է որ այս միջազգային
Կաթողիկէ ջերմեռանդական ցոյցն արժանի պիտի լինի դասուելու անոնց
քով որ կատարուեցան ի Գոլոնիա, Լոնտրա, Գանատա, Մատրիտ :

Արդէն քանի մը ամիս առաջ Արհի. Հէյլէն վիճակաւոր Եպիսկոս
Նամբւրի, որ Նախագահն է Համաժողովներու մնայուն Մասնախում-
բին, այցելեց Վիէննա՝ կարգադրելու համար ինչ որ հարկաւոր էր Ներ-
կայ եղաւ Աւստրիոյ եպիսկոպոսաց գաւառական ժողովոյն, որոնց մէջ կը
նստէին նոր Կարդինալներն Բրակայի, Սալցպուրկի, Վիեննայի և Օլմիւցի :
Ասոնք ամենքը մեծապէս շահագրգռուեցան այս պատրաստութեանց
համար. և այն ատենէն իսկ որոշեցին իրենց թեմերուն մէջ ալ երկրորդա-
կան մասնախումբեր հաստատել : Արհի. Հէյլէն քան, մը նիստերուն ներ-
կայ գտնուեցաւ : Համաժողովին թուականը որոշուեցաւ յառաջիկայ
Սեպտ. 12էն ց15 : Մեծ թափօրը պիտի քալէ Երեւելի միծ ծառուղիէն
որ հին Վիէննայի պարիսպները կը բովանդակէր և շուրջ կը պատէ քա-
ղաքը, Ringstrasse անունի, սակ, ամբողջ եռուզեռ, կեանք և արուես-
տական հրաշալիք : Կաթողիկէ ջերմեռանդութեան և առ աստուածային
Խորհուրդն զոհարելութեան հիմնալի կոթող մը պիտի կանգնէ Կաթողի-
կէ Վիէննա :

Վիէննա, Աւստրիոյ Մարկրաւ Ս. Լէոբոլտի հին մայրաքաղաքը,
ուր վախճանեցաւ Սարկոս-Աւրեղիոս յամին 180, զոր և իրենց գլխաւոր
քաղաք ըրին Հապսպուրկի Հարստութեան իշխաններն 1276է ի վեր,
զարդարուեցաւ, այս իշխանաց ձեռքով, կրօնական մեծամեծ յիշատա-
կարաններով, որոնցմէ չքնաղագոյնն է Ս. Ստեփանոսի Մայր Եկեղե-
ցին, որու շինութեան ձեռնարկուած է ի 1144, երբ Ս. Լէոբոլտի որ-
դին կամ յաջորդն դրաւ անոր հիմնաքարը :

Այս գոթական գեղեցիկ եկեղեցւոյն մէջ տեղի պիտի ունենան Հա-
մաժողովին գլխաւոր հանդիսութիւնները : Եկեղեցւոյն երկաթնութիւնն է
108 մէթր, լայնութիւնն ու բարձրութիւնն 27, իսկ զանգակատան
բուրգը 136 միզր բարձր է :

Դեռ ուրիշ շատ գեղեցիկ եկեղեցիներ կան Վիէննա քաղաքին մէջ,
ուր կը գտնուի երկու միլիոնէ աւելի Կաթողիկէ հաւատացեալ ժողովուրդ :

Այսպիսի քաղաք մը, այսպիսի ժողովուրդ, այսպիսի թագաւորող
Տուն մը և Կայսր-Թագաւոր մը՝ բովանդակ աշխարհքէ ի Համաժողով
Ս. Հաղորդութեան հրաւիրուած հաւատացեալներու ստուգիւ կ'երաշ-
խաւորէ՝ թէ պիտի մասնակցին ցոյցի մը որ իրապէս արժանաւոր ըլլայ
մեծափառ Ս. Խորհրդոյ գոհութեան :



ՄԱՆՐԱԳՈՐԸ

ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ՍԲԱՆՁԵԼԻ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս. Գրոց մէջ ինչ
կ'ըսուի անոր մասին: Մանրագործի յիշատակութիւնը խնցողակի կերպիւ մը եղած է Երգ երգոցի մէջ [Է. 13], բայց Ծննդոց Գրքին մէջ [Լ. 13—14] մասնաւոր նիւթ հայթայթած էին Մովսէսի Լիայի ու Ռաքէլի մէջ ծագած մէկ միջադէպը յառաջ բերելու համար: Յակովբ Նահապետին երէց որդին Ռուբէն, զեռ մանուկ դաշտ ելնելով, հին կը գտնէ մանրագործներ [ՏՈՒՏՍԹԻՄ] և իր մօր Լիայի կը բերէ: Բայց իր քոյրը Ռաքէլ տեսնելով զայն՝ կը փափաքի առնուլ տնոցմէ, և վերջապէս զիջողութեան մը փոխարէն կը համոզէ իր քոյրն ու կ'առնու:

Արդ, ոմանք յենլով մանրագործի շուրջ հնուց ի վեր տարածուած չատ մը աւելորդապաշտութիւններուն վրայ, Ս. Գրոց այդ անցից մէջ իսկ կ'ուզեն փնտռել՝ եթէ ոչ հետքը, գէթ արձագանգը այն աւելորդապաշտ գաղափարներուն: Այսպէս Ռէօս կը կարծէ թէ «Չառակ ունենալու համար է որ Ռաքէլ անկէ ուտել կը փափաքի»: Ուրիշ հեղինակներ կը կարծեն Նոյնիսկ՝ թէ տոսայիւ ըսուածը Եւայի կերած պտուղն ըլլալու է [Տե՛ս Calmet, Dict. de la Bible]:

Յայտնի է ինքնին՝ և ձեռնհաս անձերէ ապացուցուած թէ Ս. Գրոց մէջ ո՛ր և է որդեծնութեան յատկութիւն մը չի վերագրուիր մանրագործի: Բայց սակէ չի հետեւիր թէ, Ռաքէլ աւելորդապաշտ դիտում մը չունենաւ, քանի որ ամուլ էր ինք այն տառն: Եւ արդէն, չէ՞ որ Սեմական ազգերու մէջ ընդհանուր գաղափար մը կար թէ որդեծնական յատկութիւն մ'ունէր մանրագործը, և ինչո՞ւ Ռաքէլ ալ ազդուած չլլար այդ ժողովրդական աւելորդապաշտութիւնէն:

Ի՞նչպիսի տուեց է եւ Մանրագործ Յունարէն փոխառեալ լատ. մըն է, ինչ յատկութիւն ունի: *մանրագործ* այսպէս կոչուած՝ նոյնը առաջին անգամ ուսումնասիրող բժիշկին անունովը: Իսկ իբր, տոսայիւ չառանորէն կը կարծուի թէ մանրագործ ըսուածն է: Արարացիք՝ թօնափ-էշ-նին, Եհպրուհ եւն. կ'անուանեն. իսկ Թուրքերը՝ Ասկւ օրու, զան գորտաւ եւն.:

Ժողովրդային երեւակայութիւնը այդ տունկին վերագրուած հրաշալի յատկութիւններէն ազդուած, զեռ չատ մը տնուներ տուած է անոր, ինչպէս մարդասակ, մարդա՛րս: մարմնասակ, մարդակերպ, կիսամարդ եւն. եւն.:

Մանրագործը կը պատկանի մորմազդիներու ցեղին [solanées], ճակընդեղի նման արմատ մ'ունի՝ երբեմն երկուքի բաժնուած, որ պատճառաւ մարդու նմանցուած է ան: Գարնան սկիզբները կը ծլին սերեւ-

ները՝ որոնք հազարի [մարուշ] կը նմանին, սպիտակ կամ կարմրորակ ծաղիկները գետնախնձորի ծաղիկները կը յիշեցնեն: Մայիսի մէջ կը հասունանան պտուղները, որոնք մութ-նարնջագոյն են ու սովորական սալորի մեծութեամբ, քաղցրահամ և բաւական անուշաբոյր, մինչ տունկին հոտը ծանր ու գորշ է:

Արաբները մեծ հաճոյքով կը ճաշակեն անոր պտուղները, որոնք թմրեցուցիչ ու քնարեք յատկութիւն ունին, և կէս մը հաշիշի ազդեցութիւնը կ'ընեն երանական աշխարհին մէջ փոխադրելով ճաշակողը, բայց շատ չանցած՝ իսկոյն ընդհանուր ջլատութեան մը մէջ կը ձգեն զանի: Իսկ բուն իսկ արմատը թունաւոր է, ինչպէս կը գտնենք Յակովբ Վ. Այուբեանցի երգ երգոցի մեկնութեան մէջ, երբ յառաջ կը բերէ արժանահաւատ բժիշկի մը խօսքերն ըսելով «Սոյն արմատէն բակլայի մեծութեամբ կտոր մը երբ ծամելով կուլ տուի, մէկէն հրէշի մը փոխարկուած կարծեցի ինքզինքս, ինչու որ դէմքս սաստիկ կարմրեցաւ, գլուխս հընգապատիկ խոշորցաւ կարծես, ինչպէս նաև բոլոր մարմինս ու գինովի պէս եղայ... Ժամու մը չափ այսպէս տեսից, և վերջապէս ճարահատ եղած մատս բերանս խոթելով փախեցի ու հանգստացայ:»

Մանրագործը քիչ թէ շատ ամէն տեղ կը գտնուի, մանաւանդ Արեւելքի մէջ: Բայց ինչ ինչ տեղեր, ինչպէս Կիլիկիոյ, Հայաստանի և Յունաստանի մէջ բուսածներուն արմատները բաւական նմանութիւն կ'ունենան մարդու կազմին: Սակայն պէտք է գիտնալ որ, աստիճանաբար մէջ բախտահմաներու կամ չահագէտներու վաճառած մանրագործները, որոնք շատ անգամ մարդու կամ կնոջ կատարեալ մէկ մանրանկարը կը կազմեն, արուեստական են ու ոչ թէ բնական: Այդ չահագէտները տունկը դեռ հողին մէջէն չհանած հատու գործիքով մը կը քանդակեն արմատը՝ քիթ, բերան եւն. չինելով, իսկ մաղ բուսնելիք տեղերն ալ գարբի ու կորեակի հատեր կը խոթեն ու հողով կը գոցեն անոնք մինչև որ արմատ արձկեն, ինչ որ 20 օրուայ մէջ կը կատարուի: Եւ վերջապէս սուր գործիքով մը այդ հատիկները արմատաքի կը խլեն, և նուրբ արմատները առնելով պատշաճ տեղերը կը հաստատեն, և այսպէս յարդարած ի վաճառ կը հանեն:

(Շարունակելի)

Գերապայծառ տէր

40 թիւ Արճագանդի, էջ 185, կրօնք բառի ստուգաբանութեան 15երորդ հարցման՝ 2րորդ պատասխանին մէջ, սպրդեր է մեծ մի սխալ. խնդրեմ հաճիք այսպէս սրբագրել:

2. Ունին նաև իթիգաս բառը, արմատն է ազգ. որու համաձայն կը հնչէ Հայերէն ուխտ բառը:

ԳՐԻԳՈՐ Ծ. Վ. ԱՇԸԳԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿԷ ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԱՆՈՐ ԹՅՆԱՄԻՆԵՐԸ

Վարի Մոխրակոյս (Կարին) 9 Մարտ 1912

Ձորս տարիէ ի վեր խառորջաւը կը գտնուիմ և ականատես կը դիտեմ բոլոր այն արարքները որոնցմով ճշմարտութիւնը և Կաթողիկէ կարծիքը կը նախատուին յաճախ մեր գաւառին և — ամբողջ Արեւելիքի մէջ։ Ասպարէզ արուած է ոչ — Կաթողիկէ մամուլին գրելու ամէն ինչ՝ զրպարտելու իր ուղածին պէս, ապահով որ իրեն դէմ ձայն բարձրացնող պիտի չըլլայ. վասն զի Արեւելիքի մէջ՝ Կաթողիկէ՝ գէթ Հայ-Կաթողիկէ մամուլ գոյութիւն չունի, վասն զի Կաթողիկէ կարծիքը մեռած է մեր համայնքին մէջ։ Ո՛ր, կը խնդրեմ, Արեւելիքի ո՞ր քաղաքին մէջ մենք ունինք Կաթողիկէ դրօշը բռնող օտկան մը այնչափ լուսաւորչական, Բողոքական և կուսակցական թերթերու դէմ։ Ահա այդ պատճառաւ՝ այն թերթերը կը յանդգնին ամէն լրբութիւն գրելու՝ առանց ընդդիմախօսի մը բախելու, առանց խղճի խայթի իսկ՝ որովհետեւ այսօր խղճի վճիռներն ալ աճուրդի դրուած են հրապարակի վրայ։

Մինչեւ ե՞րբ պիտի լռենք, պիտի համբերենք. ալ հերիք է որ այսչափ երկար ժամանակ ճշմարտութիւնը՝ Կաթողիկէ կարծիքը կաշկանդուած մնան մեր երկրին մէջ։ Պարզենք մեր դրօշը կեղծ «եղբայրներու» դիմաց որոնք մէկ երկու դար յառաջ մեզ կը հալածէին և այսօր մեր քայքայուած կ'ուզեն։ Թող Հայ-Կաթողիկէ համայնքը ցուցնէ թէ ինքն ալ կ'ապրի՝ ոչ անուսով միայն այլեւ գործունէութեամբ՝ իրեն յատուկ մամուլը հաստատուելով Արեւելիքի մէկ գլխաւոր կեդրոնին մէջ։

Երբ կ'ըսեմ թէ լրբութիւններ և զրպարտութիւններ կը գրուին, չեմ չափազանցեր։ Կոյ արդեօք մեզի՝ Հայ-Կաթողիկէներու համար նուիրական բան մը զոր յիշեալ թերթերը յարգած ըլլան. արդեօք մեր դաւանանքը, արդեօք մեր սկզբունքները, արդեօք մեր նուիրապետութիւնը...։ Տեսէք թէ այսօր ալ ինչպէ՞ս կը ծափահարեն մեր ներքին պայքարներու։ Եւ սակայն այդ թերթերն են որ ընթացք ունին մեր համայնքին մէջ. անոնց թունաւորիչ արտադրութիւններն են որ կը սնուցանեն՝ կը մշակեն Հայ-Կաթողիկէ մտքերը՝ երիտասարդէն սկսեալ մինչեւ ծերը։ Ալ ինչո՞վ պիտի ապրի Կաթողիկէութիւնը Արեւելիքի մէջ։

Երբ մենք չունինք մեր սեփական մամուլը, բնական է թէ մեր ուղղութեան չհամակրող թերթերը՝ խեղաթիւրելով իրողութիւնները, պիտի աշխատին ներկայացնել մեր գործունէութիւնը բացասական գոյնելով՝ և ընդհակառակն իրենց կարծիքները պաշտող ջերմեռանդներու ջրնջին գործերն իսկ ցուցնել մանրադէտի մը մէջէն՝ հսկայական չափերու տակ։ Ահա անգամ մ'եւս առիթ կ'ունենանք կարգալու տողեր որոնք

315

կուգան հաստատելու մեր դիտողութիւնները: Ազատամարտի¹ տեղւոյս թղթակիցը նկարագրելով մեր գաւառի կրթական վիճակը կ'ըսէ .

«Կիսկիսի (էրզրում) կրթական վիճակը տեղ տեղ չէ, իսկ հոն ուր կարողիկ կոչեր կայ՝ հոն ամեն ինչ խաւարի մէջ է. Թեքեանի բարը (.) այս տեղ շատ բան փանդած է: Կարմիրիկ անուն գիւղ մը կայ որուն բնակիչները... Անցեալ տարի գրեթէ անպատեղով ճամբու դրած են իրենց մէկ ուսուցիչը «Լուսաւորչական» ըրթալուն համար...: Կարողիկ գիւղերէն միայն Մոխրակոյտը — այն ալ շնորհիւ Եփեսոսեանի — ունի շատ ուսուցիչ մը, որ հակառակ իր ուսաւորչական ըրթալուն երբեք չգիտէ խտրութիւն դնել երկուսի (.) միջեւ. եւ երբ տարի է կը շարունակե տեղաւոր քաթի հաշտեմէններուն: Ի՞նչ կասկած, որ Լուսաւորչական գիւղերը անհամեմատ աւելի կրթասէր են (.) եւ քաթի իրենց քաղաքական զգացումով: Խոթիկոյնը (.) մեն գիւղ մըն է (1800 տուն), քայց լուրի կանոնաւոր դպրոց:»

Պէտք էր կարեւորութիւն տալ տեղեկութեան մը որով ստորագրողը անծանօթ կը մնայ, սակայն քանի որ մեր ժողովուրդը լնդհանրապէս ամէն տպագրութեան հաւատք կ'ընծայէ՝ պարտք կը համարինք իրողութիւնները ճշգրէլ:

Նախապէս ըսեմք որ՝ կղերի դէմ ուղղուած բարբառները չեն զարմացներ, այդ ոճը Ազատամարտի և իր արբանեակ Յաղաքի սովորական է: Ստոյգ է թէ այս կողմի գիւղերու մէկ մասին կրթական վիճակը գոհացուցիչ չէ, սակայն ատիկա կղերի ազդեցութեան վերագրելը կանխամտութեան և ոչ տրամաբանութեան արդիւնք է: Ասոր հակառակ՝ իրողութիւնը և միւս գիւղերու մէջ պակաս չեն այն դպրոցներ որոնք մեր տեղի համար պէտք եղածին չափ գոհացուցիչ են և օգտակար, և այս դպրոցներու վարիչները կղերներ են: Իբր օրինակ յիշենք Խանդաձորի և Վարի Մոխրակոյտի վարժարանները՝ որոնց ներքին կազմին աւելի մօտէն ծանօթ ենք՝ և որոնց ուսումնական մակարդակը անպայման աւելի բարձր է քան Բ. թղթակցին դրուստած «Անդրանիկ» վարժարանը:

Յիշեալ թղթակցին համար տեղւոյս «Հայ-Կաթողիկ» գիւղերուն մէջ՝ միակ վարժարան մը կայ՝ որ է Մոխրակոյտի «Անդրանիկ» կոչուած վարժարանը, և մէկ «լաւ ուսուցիչ» մը՝ ան ալ «Լուսաւորչական»: Ազատամարտի ընթերցողը պիտի երեւակայէ մտաւորական բարձր առաւելութիւններով օժտուած անստգիւտ վարժապետ մը: Պատրաստք... Այդ խորհրդաւոր դիմագծի և ճկուն շարժումներուն ետեւ՝ դիտող աչքը չուտով կրնայ նշմարել իմաստակ և աննկարագիր մէկը: Զրպարտած չենք ըլլար այսպէս խօսելով: Իմաստակութեան փաստը կ'ուզէք. — Ի՞նչ կը կոչէք այն մարդը որ անծանօթ թուրքերէնի և ֆրանսերէնի նոյն լեզուներու դաստիարակութիւն կ'ընէ: Աննկարագրութեան փաստերը պակաս չեն նմանապէս: Այդ «Լուսաւորչականը» որ «Երբեք չգիտէ խտրութիւն դնել երկուքի միջեւ», յայտնի է թէ աննկարագիր մէկն է՝ որ իր շահերու համաձայն գեղատաւութիւն պէս գոյնը կը փոխէ: Ի՞նչ հազար թէ կեանքի մէջ սկզբունքով չի ընթանար. ինչպէս իր նմանները՝ նա արդէն կենաց ճամբուն վրայ մոլորած մարդ մըն է որ կոյրի պէս խախտափելով կը յառաջանայ և սակայն կ'ուզէ ուրիշներու առջնորդել: Նա չի բարձրեր կենաց

¹ Թիւ 811. էջ. 3.

լուրջ նպատակը և կրօնի վեհութիւնը, նա արտօնեալ կ'զգայ ինքզինքը երկուքին հետ ալ խաղալու: Եթէ Կարմրիկցիները ասոր նման լուսաւորչական մը անպատուելով ճամբու դրած, են գովելի են:

Վերին Մոխրակոյտի ուսուցիչն է որ «լաւ ուսուցիչ» կրնայ համարուիլ, և սակայն այդ գիւղէն քիչ մը հեռուն Վարի Մոխրակոյտի մէջ կը գտնուի ուրիշ ուսուցիչ մը որ Ազատամարտի դրուատածէն աւելի զարգացած և խախտող մէկն է: Բայց նա «Կաթողիկ» մին է և անոր վարժարանը «Ս. Սրտի վարժարան» կը կոչուի, այդ պատճառաւ à priori նա չի կրնար լաւ ըլլալ և ոչ իր վարժարանը «Կանոնաւոր» որչափ ալ այդ ուսուցիչին ցըցուցած արդիւնքը մեծ ըլլայ: Սքանչելի տրամաբանութիւն:

Թող յարգելի ընթերցողք չկարծեն թէ մենք անպատուելու և բաժնաւոր մարման մըն ենք: Մինչեւ ցայսօր մենք Անդրանիկ վարժարանի ուսուցիչը երբեք նախատած չէինք իր «Լուսաւորչական» ըլլալուն համար: Բայց այսօր՝ քանի որ նա իբր Լուսաւորչական կը դրուատուի, և Կաթողիկէները կ'անպատուուին, մենք ալ կ'ստիպուինք ցուցնել իր իրական արժէքը:

ԱԹԱՆԱՍ ԼՍԶՍՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌԱՎՍ

Սրբազան Բաղնայապետը Ապրիլ 15ին մասնաւոր ունկնդրութեան ընդունեց Գաղղիայէն եկած ուխտաւորաց խումբ մը: Այս ուխտաւորներն էին այն երկսեռ մանկիկներ, որոնք շնորհիւ Ս. Պապին նոր տրամադրութեան, իրենց շատ մատղաշ հասակին մէջ բախան ունեցեր էին Առաջին Հաղորդութեան Ս. Սեղանին մերձեցալու: Ասոնց թիւն էր շուրջ չորս հարիւր, որոնք իրենց ծնողքներէն և ազգականներէն ընկերացած, մօտաւորապէս հազար հինգ հարիւր հոգի, եկած էին Ֆրանսայէ ի Հռոմ, մատուցանելու համար իրենց որդիական սիրոյ յարգանքն եկեղեցւոյ Գլխոյն և իրենց հոգեւոր Հօրը, և ուխտելու համար անդրդուելի հնազանդութիւն: Ունկնդրութիւնը կատարուեցաւ Վատիկանու Սիսթինա մատրան մէջ: Ի ներկայութեան բազմաթիւ Գաղղիացի եպիսկոպոսներու: Կարգինալ Վանութելլի ներկայացուց զիրենք Ս. Պապին և Գաղղիէի ուղերձ մը խօսեցաւ, յորում ի վեր կը հանել «Բահանայապետին այս մեծ գործը՝ իբր քաղցման հանդիսացած Քրիստոսի խօսքին որ լսաւ. «Թող տուի որ մանկիկներն խնձի գան»»: Քրիստոսի Փոխանորդին այս գործը ուրախութեան ալաղակ մը փրցուց բովանդակ Կաթողիկէ աշխարհէ. արեւցոյց հաւասքը, անցոյց քաղկապոսութիւնը, ալաղակ սերունդներու համար Աստուծոյ մշմարիտ երկրպագուներու ընկալ խնամքտ ալաղակից, որովք Յիսուսի հետ ըրաւոր, քաղաք ալիսի մղին կեանքի պայտար: Ամբողջ քրիստոնէայ աշխարհ մեծապէս շնորհապարս է Բահանայապետին: Եւ այս քանի մը հարիւր պզտիկ ուխտաւորները կը ներկայացնեն իրենց անքիւ հայրենակից եղբայր խոճերն յոսս Նորին Սրբազնութեան. ամենքն ալ զաւակներ այն ազգիւ Կաթողիկէ ազգին որ այնքան մեծ ծառայութիւններ մատուցած է Ս. Եկեղեցւոյ՝ դարեւ ի վեր: Այս անմոռանալի աւուր մեջ այս փոքրիկ զինուորներն իրենց Հօրմէն օրհնութեան քառ մը կ'ակնկալեն որդիաբար, որ իրենց մանկական քաղի պիտաւորութիւնները ամրապնդի, առհաւաքեալ քաղիկեցալ քրիստոնէայ մ'ըրաւր:» Ապա փոքրիկն Պրե Ս. Հօր առջեւ գալով գողտրիկ ծառ մ'արաստանեց, յորում ի մէջ այլոց կ'ըսէր սա ոճերն ալ. «Ինչպէս Հրեասանի մանկիկներն կը խնուէին երբեմն Տեառն մերոյ Յիսուսի շուրջը, սեւ մեկն ալ, մեկն՝ Գաղղիոյ պզտիկ տղա, յոսս Ձեր Սրբութեան: Մեկն կու գտնէ յանձն վեր հարիւր հազարաւոր պզտիկ եղբայրներուն, որովք այնչափ կը փախափին ընկերանալ

մեզ ի Հոռիմ, Ձեր Սրբութեան շնորհակալ ենք լսել՝ մեզ պոփկներուս Ձեր դրած այս անգին քարիփին համար... Ձեր Սրբութիւնը ստացաւ մեր փոքր արեւը... ո՛վ ամենասուրբ եւ ամենասիրեցեալ Հայրիկ, այսօր ուրախ զուարթ կը խոստանանք Ս. Եկեղեցւոյ անդրդունչի հաւասարութիւն, ինչպէս նաեւ Ձեզ որ յանուն Աստուծոյ զայն կը կառավարեիք այնքան վառաւորապէս:»

Ապա Ս. Հօր առջեւը ծունկ դրին քանի մը մանչեր ու աղջիկներ, և իրեն մատուցին շատ մը արպօմներ որ կը բովանդակէին հարիւր յիսուն հազար մանուկներու անունները, որոնք Ս. Քահանայապետին անուանակից Ս. Յովսէփայ տօնին օրը հաղորդուած էին և իրեն համար աղօթած էին, անմեղները՝ Յետոյ բոլոր տղաք մի առ մի Աջահամբոյրին մօտեցան. Սրբազանը զիրենք կը շօյէր և քողոր խօսքեր կ'ուղղէր մէն միոյն, եւ իբր յիշատակ այս երկար ուղեգնացութեան ուխտաւորաց, իւրաքանչիւրին ընծայեց յարձաթեայ միտայ մը, որոյ մէկ կողմը կար Սիրտ Յիսուսի պատկերը՝ շուրջը սա գաղղիներէն խօսքերով. Ահա Սիրտ որ այնչափ սիրեց մարդիկները. իսկ միւս կողմը քանդակուած էր Պիոս Ժ.ի պատկերը, սա խօսքերով. Կարողիկե եւ Գաղղիացի միջոք. և՛ Աստուած պաշտպանե՛ք Գաղղիա: Ս. Քահանայապետը բազմելով ապա իր Աթոռին վրայ գեղեցիկ ու ազդեցիկ խօսակցութիւն մ'ըրաւ հիացած ուխտաւորիկներուն, որմէն՝ կարճ ըլլալու համար, կը քաղենք հետեւեալները.

Կը յիշեցնէր Քրիստոսի հրաւերը՝ ուղղուած փոքրիկ տղայոց, զորս աստուածային վարդապետք կը գրէր ու կը շօյէր, արեւոյտքիւնը խոստանալով իրենց. իրենք ալ սկս հրաւերին անօտքեր էին, եւ երկար համբարգումքեան աշխատանքայն յանձնառու ըլլալով, եկած էին Անոր Փախանդորին: Յիշեցուց նաեւ Քրիստոսի մանուկ մը կոչելով գրկելը եւ հրամայելը. «Զոյց եղէ՛ք եւ մի՛ արհամարհէ՛ք այս փոքրիկներէն մէկը. վասն զի կ'ըսեմ ձեզի որ անոնց հրեցակները անդադար կը տեսնեն իմ Հօր երեսը որ երկնինն է...» պէտք չէ այս հրեցակները մեղով սրտեցնել, որոնք անոնց արեւուն մէջ ալ կը տեսնեն սիրոյ Աստուծոյն երջանիկ դէմքը զոր ընդունած են ի Ս. Հաղորդութեան, որ հոն կը լուսափայլի իբրեւ ի հայելոյ անմեղութեան, մաքրութեան եւ անբծութեան: Իրենք միացած են Անոր արեամբ հոգւով ու մարմնով, Անոր արեամբ. Անոր սիրտը իրենց արջին վրայ բարախեց: Վրենց հրեցակներէն աւելի պատշաճ արժանացել էին իրենք, անանելով Յիսուսի Քրիստոսի, մի ըլլալ Վ. Անոր հետ, կերպով մը իրենց սեփականելով Անոր աստուածային բնութիւնը եւ անհուն կասարելութիւնները: Այս անպատշաճ միութենէն հիասթափ շնորհներ կը բոխին. այս սիրեցեալ Փրկիչը մեր իմացականութեան կը պարգեւէ նշանաւորութիւն, մեր կամքին՝ արգարութիւնն ու սրբութիւնը, մեր արիւն՝ բարութիւնը. անանկ որ հաղորդուող հաւատարմութեամբ կրնայ ըսել Ս. Պօղոսի հետ. «Յիսուս Քրիստոս իմ կեանքն է. եւ կ'ապրիմ» ալ ո՛չ թէ ես՝ ալ Յիսուս Քրիստոս է որ կ'ապրի իմ մէջս»: Աստուած անբիծ մաքրութիւն է. եւ ով որ կը հաղորդուի, աղանձի մը պէս կը բարձրանայ այս աշխարհիս տղան ջուրէն եւ կը բռնի կ'ապաստանի ի ծոց Աստուծոյ, ի ծոց Անոր, որ աւելի մաքուր է քան ձիւներն որ կը պսակեն լեռները: Աստուած անհուն գեղեցկութիւն է. եւ ով որ կը հաղորդուի, հրեցակներու նայուածքները իր վրայ կը հրաւիրէ: Աստուած իւր էութեամբ սեր է: Եւ Յիսուսի միացող հաւատարմութեամբ կը յափճակուի սիրով եւ կ'ալլափախուի. համակ բաղորդութիւն կ'ըլլայ վարմունքին եւ խօսքերուն մէջ. սիրտը կը գեղու սիրով: Աստուած բարութիւն է եւ կասարելութիւն. եւ հաղորդուող հաւատարմութեամբ կը լեցուի ամէն առաքինութիւններով. ամէն ոյժ կը ստանայ ինքն իրեն յաղթելու. աշխարհային բարիքը արհամարհելու եւ երկնից ցանկալու. կարծես եղիայի հրեղէն կառնեղովն հեռու կը վախչի աշխարհէ, ի գաւառս յալիսեմական երանութեան. քանզի «Մարդու աչքը տեսած չէ, բնաւ ականջը լսած չէ, եւ մարդու արիւն մէջ անգամ ինկած չէ այն երջանկութիւնը զոր պատրաստեց Աստուած զինքը սիրողներուն: Ասանկով կը սուգուի ինչ որ Քրիստոս ըսաւ. «Ով որ իմ մարմինս կ'ուտէ, եւ իմ արիւնս կը խմէ, ունի յալիսեմական կեանք»»: Զրոյց՝ պիտի ունենայ, ալ թէ արդէն ունի, անոր ստոյգ գրաւականն ունի: Ուստի Քահանայապետք կ'ողջունէր զիրենք իբր հրեցակներ, ո՛հ, նայն իսկ հրեցակներէ աւելի

պատուեալ: Եւ կը յաւելուր քանի մը խրատներ . նախ՝ յարատեւել Քրիստոնէական կրօնքի սկզբունքները լաւ սորվելու . հոն պիտի ուսանին, ի մէջ այլ նմանութեանց, թէ Աստուածային Հաղորդութեան խորհուրդը կեդրոնն է հաւատոյ, ուրիշ ամէն զերմեռանդութիւններու կէս նպատակին, ամէն բարեաց աղբերակներ, ուրիշ ամէն խորհուրդներու կատարումը, աստուածային զաղտնեաց հաւատոտութիւնը, ամէն շնորհաց գետը, ամէն ցաւերու պալատանը, կենաց հացը, բուսակն որ զմեզ կը կազդուրէ կը զօրացնէ դէպ ի յաւիտեականութիւնը քնելիք համբորդութեան մէջ, եւ ամբողջ եղանկութեան կանխիկ առհաւաստեայն եւ վայելումներ: —Երկրորդ. յանախակի պէտք է մերձեցան Ս. Հաղորդութեան, որ մեր ամէն օրուան հոգեւոր հացն է, զօրանալու համար պէտք է միանան սիրելի Փրկչին հետ: Նոյնպէս սեւեռայն յայցելութիւն Ս. Հաղորդութեան: Ինքն ըսաւ. «Եկե՛ք ինձի դուք որ անօրի էք. եւ ես պիտի կօտայնեմ զձեզ. դուք ամէնքդ որ յոգնած էք եւ բեռնաւորուած. եւ ես պիտի տամ ձեզ սպոյսանք, խաղաղութիւն ու մխիթարութիւն:» —Երրորդ. պահպանենք Յիսուսի սէրը. Անոր Առաքեալներն ըլլան, զանեւն ըլլան իրենց բնականաց, զոր պիտի մխիթարեն իրենց բարի վարուիք. իրենց օրինակաւ շահին ամէնքդ առ Ս. Հաղորդութիւն. եւ իրենց աղօթքով ու պարկեցութեամբ դարձի պիտի բերեն մեղաւորները, անհաւատները, անարարները:»

Եւ յոտնկայս օրհնեց զիրենք և մեկնեցաւ իւր յարկարածինը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Ուրախութեամբ կ'արձանագրենք որ Սրբազան Հայրն մեր Պիոս Ժ. Բահանայապետը, ի նկատի առնելով Արհի. Միքայէլ Եպո. Խաչատուրեանի՝ վիճակաւորին Մալաթիոյ, որդիական հպատակութեան զգացումները, հաճած է վերջնել անոր վրայէն կախակալութիւնը: Յիշեալ Եպո. ժողովուրդը պիտի վերադառնայ իւր վիճակը:

* * * Ամենապ. և Գերեթ. Հոգեւոր Տէրն մեր սիրով ընդունելով Գեր. Մեսրոպ Վ. Ուղուրեանի և Գեր. Յովսէփ Վ. Կոռյեանի հպատակութեան արտայայտութիւնը, արձակեց զիրենք կախակալութեան պատիժէն:

* * * Հռովմէն հոս հասան Գեր. Յակոբ Վ. Կալստեան և Գեր. Յովհ. Վ. Գուլումեան: Առաջինը Մշոյ, իսկ երկրորդը Ատանայի թեմին կը վերադառնան:

* * * Ամենապ. և Գերեթ. Հոգեւոր Տէրուն կողմանէ Աւագ Թեմի Ժողովրդապետաց ուղղուած է հետեւեալ գիրը.

Կ. Պոլիս, Բերա, Ապրիլ 19 | 2 Մայիս 1912

Գեր. Տէր.

Յայտնի է ամէնուն որ կառավարութեան կողմանէ մեր Բաթրիքութեան գաղափարներով, զազրած է նաեւ Հայաթիոյ Պատրիարքարանի մէջ Բաթրիքութեան ներկայացուցչի պաշտօնը. և զայս արդէն պաշտօնապէս ծանուցած ենք յառաջագոյն հոն զմեզ ներկայացնող Գեր. Արիկեան Յովսէփ Ծ. Վ.ի որ այսուհետեւ չպաշտօնավարէր Հայաթիոյ Պատրիարքարանին մէջ:

Իսկ նշանի օրհնութեան համար որ սոսկ Հոգեւոր պաշտօն մըն է, և այլ Հոգեւոր խնդիրներու համար, Ժողովրդապետը կը պաշտաւորին դիմել Մեզ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ասիլի վե Մեզահիպ նեզաբեթինսէն մեվրուս 7 Մարտ 328

բարիխլու բեզգեթինին նեվապը քըր	193
Ամերիկա	197
Ս. Հաղորդութեան համաժողովն ի վիճակ	200
Մանրագործ	202
Կարողիկէ նմանութիւնը եւ անոր բնամիները	204
Տեղեկագրական	206

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՅՈՎՀ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏԵՐՈՐԷ-ԽՄԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊՈՒՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուսուուս հասցեւի Նո. 27

«ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի սլաւօսնական Շաբաթաբերր, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը սկսի հրատարակուիլ Նոյն ալմ 16 մեծադիր էջերէ բաղկացած եւ նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին մը, որ կը պարունակէ կարեւոր եւ մտոյզ ամէն յուրերն՝ համառօտուած . որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաթերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դնէկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արտասահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ կամ մէյ մէկ դրոցոց նամակագրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ, յօդուած եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐԶԱԿԱՆԿ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
Բերա Կ. Պոլիս

Katoghighe Arzakank

Patriarcat Catholique

Pera

Constantinople

- ԾԱՆՈԹ.— 1.— Արեւազանց կը հրատարակուի շաբաթ օրերը:
2.— Խմբագրութիւնն պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն դրկուած ո եւ է յօդուած:
3.— Չեռագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրներ պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կրկատարուին: